

ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆԸ ՀԱԼԷՊԻ ՄԷՋ (ԺՁ.-ԺԷ. Դարեր)

Վարդի Քէշիշեան
keshishian.varty@gmail.com

ՄՈՒՏՔ

ԺՁ. դարու վերջին քառորդէն ժԷ. դարավերջի շուրջ մէկդարեայ ժամանակաշրջանը առանձնայատուկ տեղ կը գրաւէ Հալէպի հայկական գաղթածախի պատմութեան մէջ: Այդ ժամանակաշրջանին Հալէպի հայագաղութը իր ազգային-եկեղեցական կառոյցներով, հոգեւոր-մշակութային եւ տնտեսական հիմնական լծակներով դարձած է հայկական կարեւորագոյն կեդրոններէն մէկը: Հոն մէկտեղուած են հայ հոգեւոր եւ աշխարհիկ առաջնորդներ ու հայ կեանքի յառաջապահ հոսանքներ: Այդ շրջանին, ազգային հոգեւոր մշակոյթը ապրած է աննախընթաց վերելք մը, գաղթածախի պատմութեան մէջ արձանագրելով յիրաւի ոսկեդարեան շրջան մը: Ահա թէ ինչու կ'արժէ անդրադարձ կատարել Հալէպի հայոց պատմութեան ամէնէն հարուստ եւ ուշագրաւ այդ ժամանակահատուածին վրայ:

Այս ուսումնասիրութեան մէջ Սիսի Կաթողիկոսութեան հալէպեան շրջանի՝ ժՁ.-ժԷ. դարերու պատմական անդրադարձները, զուգահեռաբար ժամանակի Հալէպի հայկական դէմքը ուրուանկարելով, պիտի փորձենք բացայայտել այն բաղադրիչները, որոնց միասնութեամբ եւ փոխադարձ կապի առկայութեամբ հալէպահայ հոգեւոր կեանքն ու մշակոյթը վերելքի բարձրակէտին են հասած: Այս երեւոյթը հայ կեանքի այն հազուագիւտ պարագաներէն է, երբ զիրար գրկած ու ամբողջացուցած են մտաւոր, իմացական եւ նիւթական արժէքները:

ՔԻՉ ՄԸ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Տարբեր ժամանակներու, տարբեր կողմերէ Հալէպ հասած հայեր՝ գլխաւորաբար առեւտրական նպատակներով, երբեմն պատերազմական գործողութիւններու բերմամբ, հետզհետէ բնակութիւն հաստատած են այստեղ: Իբրեւ հայկական գաղթավայր Հալէպ հանդէս կու գայ ԺԱ.-ԺԲ. դարերէն, յատկապէս Անտիոքի՝ պատմութեան ասպարէզէն քաշուելէն յետոյ: Արաբ պատմիչ Աբու'լ Ֆիդան (1273-1333) կը յիշատակէ Հալէպի բանակի հրամանատար հայազգի Շամս ալ Դին Լուլու ալ Արմանիի (հիճրի 646 (1248-49) ռազմական յաջողութիւններուն եւ հայկական զօրախմբերի շարունակական մասնակցութեան մասին¹: 1260ին Հուլիոս խանը կը պաշարէ ու կը գրաւէ Հալէպը օգնութեամբ Հեթում թագաւորի, որ 12 հազար հեծելազօր եւ 60 հազարանոց բանակ կը տրամադրէ խանին²: Իսկ 12 Մայիս 1335ին, Հալէպի Էմիրը՝ Ալթուն Բուղա, կը պաշարէ Սիսը եւ շրջակայ գիւղերը աներելէ ետք 300ի մօտ գերի առնելով կը դառնայ Հալէպ³: Շուրջ դար մը ետք, այլ աղբիւր մը կ'արձանագրէ. «...հայերը յարձակումներ կատարեցին Այասի վրայ (1347)...: Նրանց դէմ ելաւ Այասի Էմիրը..., եւ

հայերից սպանուեցին շար մարդիկ, եւ նրանցից բռնուած գերիներն ու պեպերը բերուեցին Հալէպ...»⁴: Կարելի է հետեւցնել, որ Հալէպ հաստատուած հայերու մէջ եղած եննաւելի պատերազմի գերիներ: Պատմական այլեայլ աղբիւրներ կը յուշեն, որ հայեր մերթ քարեկամական, մերթ թշնամական յարաբերութիւններ ունեցած են Հալէպի սուլթանութեան հետ, ընդ որում երկու պարագաներն ալ հայկական ներկայութեան գոյութիւնը ապահոված են քաղաքին մէջ:

Հալէպի գաղութը աւելի կը նշանաւորուի Կիլիկիոյ Հայոց Թագաւորութեան անկումէն (1375) ետք, երբ կիլիկիայէն հեռացող հայեր ապաստան կը գտնեն նաեւ Կիլիկիոյ սահմաններուն մօտ գտնուող Հալէպի մէջ, որուն հետ նաեւ առետարա-վաճառականական սերտ կապեր ունէին արդէն Կիլիկեան Թագաւորութեան ժամանակներէն: Այսպիսով, Կիլիկիոյ հայութեան զգալի մէկ հատուածը իր անմիջական շարունակականութիւնը կը գտնէ Հալէպի մէջ, որ յետագայ դարերուն եւս նորանոր համալրումներ ստանալով կը դառնայ հայ գաղթաշխարհի գլխաւոր կեդրոններէն մին՝ համապատասխան բոլոր դրսեւորումներով եւ օրինաչափութիւններով⁵:

Հալէպահայ գաղութը առաւել կը ստուարանայ ու կը բարգաւաճի ԺՁ.-ԺԷ. դարերուն, մէկ կողմէ՝ ԺՁ. դարավերջի տարատեսակ թուրքմէնական ցեղերու արշաւանքներուն հետեւանքով Հայաստանի մէջ ստեղծուած տնտեսական եւ քաղաքական ծանր իրավիճակին պատճառով հայ բնակչութեան Միջին Արեւելք, նաեւ՝ Հալէպ զանգուածային արտագաղթին, միւս կողմէ՝ միջազգային առեւտուրի ու ապրանքաշրջանառութեան մէջ Հալէպի դերի մեծացման եւ հետեւաբար ստեղծուած առետարատնտեսական բարենպաստ պայմաններուն բերմամբ: Ասիայէն Եւրոպա երկարող միջազգային առետարական ուղիներուն վրայ կարեւոր հանգուցակէտ հանդիսացող Հալէպը չէր կրնար վրիպիլ միջազգային տարանցիկ առեւտուրի մէջ բարձր դիրքեր գրաւած հայ վաճառականներուն եւ յատկապէս ջուղայեցի հայ խոճաներու ուշադրութենէն:

Հալէպ կը սկսին կեդրոնանալ Հայաստանի տարբեր կողմերէ եւ հայ գաղթավայրերէ հասած մեծատուն վաճառականներ, խոճայական դասի ներկայացուցիչներ, որոնք կարճ ժամանակի մէջ գերիշխող դիրքեր գրաւելով իրենց ձեռքը կը կեդրոնացնեն ոչ միայն Հալէպի, այլեւ ամբողջ երկրի առետարային շրջանառութիւնը՝ գրեթէ բոլոր հիմնական ուղղութիւններով, ու ասոնց վրայ ազդելու կարեւորագոյն լծակները⁶:

ՀԱԼԷՊԸ ԺԸ. ԴԱՐՈՒ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՅԱՑԱԾ ԿԵԴՐՈՆ

Սիւմէոն Լեհացի, որ 1616ին այցելած է Հալէպ, մեծ հիացումով կը խօսի Հալէպի հայ վաճառականներուն մասին. «Եւ այս քաղաքս մեծ պէնպէր է եւ շահրիստան. եւ յինքն կայ Հնու-Հնդուստանու մարդ, ամէն տեղաց վաճառական. եւ ինչ կումաշ կամիս, անդ գրանես»⁷:

Հալէպի մէջ նոյնպէս, ինչպէս այլուր, հայ խոճաններն ու վաճառականները աշխուժ մասնակցութիւն ունէին համայնքի ներքին կեանքին: Անոնք էին գաղութին կենսունակութեան, բարգաւաճումին եւ փայլուն իրագործումներուն երաշխաւորները: Զուղայեցի նշանաւոր խոճաներու՝ Պետիկ եւ Սանոս Չելեպի եղբայրներուն, անձնական նախաձեռնութեամբ եւ հոգածութեամբ հիմնովին կը վերակառուցուի ու կ'ընդարձակուի համայնքի կեանքին մէջ առանցքային դեր ունեցող Ս. Քառասուն Մանուկ՝ երեք խորաններով սինագարդ շքեղ եկեղեցին, այլեւ առաջնորդարանն ու յարակից կառոյցները: Լեհացի իր ուղեգրութեան մէջ մեծ դրուատիքով կը պատմէ խոճաներ Պետիկին եւ Սանոսին մեծագործութիւններուն մասին. «...[հասանք] ի հոշակաւոր եւ մեծահամբաւ մայրաքաղաքն Հալապ. եւ Հոգեւոր Տէրն տարաւ զմեզ ընդ իւր Դարպասն եւ իջաք Եպիսկոպոսարանն: Եւ կայր ...Սուրբ Աստուածածին եւ Սուրբ Քառասունք. եւ յայսմ ամի նոր նորոգած էր մեծցուցած՝ լայն եւ ընդարձակ, զմբէթաշէն եւ սայլակապ, յոյժ գեղեցիկ եւ վայելուչ, եւ շինողն էր խոճայ Սանոս՝ եղբայր խոճայ Պետիկին: Զի էր Պետիկն մեծ ոմն եւ երեսելի. զի որպէս փաշայ մի շրջէր, երեսուն, քառասուն եասախչով. ունէր ենիչերիք, սրահիք... կօմրուկն, մոխթասիպութիւնն, սուպաշուքիւնն, խաններն, համամինն եւ այլն ամենայն նորա ձեռքն էր»: Լեհացի խօսելով Հալէպի հայ վաճառականներուն մասին, կը գրէ. «Իմաստունք, փարթամք, գեղեցկարեսի, նման Զուղայեցոց եւ Ամթեցոց՝ անուանիք եւ մեծ վաճառականք, որ մարդ ամաչէր երեսվին հայի: Կայր խոճայ Ղանտիլն եւ այլ համբայք նորա քառասուն հազար, յիսուն հազար բեռան տէր...»⁸:

Հալէպահայ երեսելի խոճաներ ու իշխաններ եկեղեցական թանկագին սպասքով, ծիսական իրերով, սրբապատկերներով կը զարդարեն նորոգուած եկեղեցին: Պատահական չէ, որ ժամանակի ձեռագիր յիշատակարաններուն մէջ «երկնանման», «յոյժ գեղեցիկ եւ վայելուչ» այլեւ «աստուածաբնակ մենաստան» բառերով կը բնորոշուի Ս. Քառասուն Մանուկը:

Ս. Քառասուն Մանուկ Եկեղեցոյ Գանձատունը պահուող եկեղեցական սպասքի եւ զարդեղէններու արձանագրութիւնները, ինչպէս նաեւ Հալէպ գրչագրուած ձեռագիրերու յիշատակարանները լաւագոյնս կ'արտացոլեն հալէպահայ վաճառական-խոճաներու «արդեամբ» ստեղծուած հոգեւոր եւ նիւթական արժէքներու ամբողջութիւնը, այլեւ համայնքին կենսունակ մթնոլորտը: Ի հաստատումն, բաւարար է յիշել, որ Հալէպի գրչատուն-դպրատունը (Ս. Քառասուն Մանուկ Եկեղեցիի կից), իր ամէնէն փայլուն շրջանը կը բոլորէ ԺԶ.-ԺԷ. դարերուն: Ասիկա զարմանալի չէ, երբ նկատի առնենք, որ մեծմասամբ Հալէպի հայ վաճառականներն էին նաեւ գրչութեան ու դպրութեան, արուեստներու եւ արհեստներու հովանաւորները՝ իբրեւ պատուիրատու, ստացող կամ նուիրատու:

Հայ վաճառականներու սեւեռումը Հալէպ, հետեւաբար նաեւ տնտեսական ներուժի կուտակումը վաճառաշահ այս քաղաքում,

ժամանակագրորէն կը զուգահիսի Սոյ Կաթողիկոսութեան առժամապէս Հալէպ հաստատուելուն, ուր դարեր առաջ արդէն հիմնաւոր արմատներ նետած հայոց եպիսկոպոսանիստ եկեղեցին ունէր հոգեւոր իշխանութեան կեդրոն ըլլալու նախադրեալներ ու պայմաններ:

Սոյ Կաթողիկոսութիւնը իր հաստատումէն ի վեր, յատկապէս 1375էն ետք, երբ կաթողիկոսական աթոռը զրկուեցաւ պետական եւ քաղաքական յենակէն ու զօրավիգէն, չէր կրնար զերծ մնալ քաղաքական թէ կրօնական ոտնձգութիւններէ ու յարձակումներէ:

Այսպէս, Կիլիկիան նուաճած մոնկոլ-թաթարական աներիչ արշաւանքներուն՝ ԺԵ.-ԺԶ. դարերուն կը յաջորդեն տարատեսակ թուրքմէնական ցեղերու ասպատակութիւններն ու երկարատեւ պատերազմները: 1467 թուակիր յիշատակարանի մը մէջ կը կարդանք. «Ի մեծ թուին Հայոց ԶԺԶ (1467), ի բազմանալ մեղաց մարդկան եւ յազումանէ չարին, Տուղարցի ոմն Շահ-Սուար անուն՝ եղեալ հակառակ Մսրայ սուլթանին... Եւ յետ այսր ամենայնի խորհեցաւ չարութիւն Սըսոյ քաղաքին եւ բերդին, ուստի բազում հեծելազօրօք խաղաց ի վերայ նորայ ի յունիսի երկրորդ օրին, եւ հրկէզ արարեալ՝ անցեալ գնաց»: Յիշատակագիրն այնուհետեւ կը շարունակէ, թէ՛ ինչպէս Շահ-Սուար գրաւած է Ատանան, Տարսնը, Այասը, Անարզաբան, Կովառան, Պաղրասը, Այնթապը, Լեւոն Բերդը, Կոպիտառան ու Բարձրաբերդը՝ «եւ փրեաց ամենայն լեռնակողմանցն»: Այս քաղաքները գրաւելէ յետոյ Շահ-Սուար կը շարժի դէպի Ասորիք, կը հասնի Հալէպ եւ կրկին կը դառնայ Կիլիկիա. «... եւ դարձաւ մրմռալով ի վերայ բերդին Սըսայ, եւ այրեաց...: Եւ քաղաքացիքս ամէն թողաք զսրուն եւ զոզակ. եւ Ֆարսահ թուրքմանն թալնեց զքաղաքն, եւ շար ըռզակ առաւ. եւ զեկեղեցեաց անօթս կողոպտեցին. եւ զամենայն աներութիւնն զոր արարին՝ չեմ բաւական ընդ գրով արկանեք»⁹:

ԺԵ. դարու կէսերէն սկսեալ եւ յաջորդող գրեթէ ամբողջ ԺԶ. դարուն Արեւմտեան Հայաստանն ու Փոքր Ասիոյ հայաբնակ շրջաններ պատուհասած ճալալիներու չարիքէն զերծ չմնաց նաեւ Կիլիկիան: Այս շրջանի դէպքերու եւ իրադարձութիւններու ականատես Առաքել Դարիժեցի պատմագիրը՝ «աշխարհաւերք եւ աշխարհակործանք»¹⁰ բառերով կը բնորոշէ ճալալիներու շարժումը, իսկ ճալալիները՝ զազաններ («...ի մարդակերպ ճալալոց զազանաց ժանեացն զերծելոյն»¹¹): Այլ տեղ մը կը կարդանք. «Թ. հարիւր ՀԶ (1527) թվին եկաւ Քար Սէփին Ճէլէլայ՝ ի Սիս քաղաք. մարդն փախաւ, ի բերթն ելաւ. շար անբում եղաւ. նայ Աստուած ազարեց զՍիս քաղաքն ի ձեռն անաւրէն Քար Սէփէ»¹²:

Ճալալիներու կատարած վայրագութիւններուն, անբաժնութիւններուն հետեանքները կու գան ամբողջացնել Կիլիկիոյ սահմաններուն մէջ ծլարձակած ձորապետութիւնները, որոնց հարստահարութիւններուն, ճնշումներուն ենթակայ պիտի ըլլար նաեւ Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը: Ատենի (1571) յիշատակարաններուն մեծ մասը կ'աւարտի նոյն՝ գրեթէ

կանոնիկ դարձած բառերու շարայարութեամբ. «...Անմեղադիր լերուք խոշորութեան գրիս եւ ծաղկիս, զի կար մեր այս էր. զի դառնացեալ սրտիս գրեցաւ ի դառն ժամանակին յորում նեղիմք յայլազգեաց. զի տաճիկն էառ զԿիպրոս եւ զբազումս կոտորեաց, զմարդ, զխաչ եւ զԱւետարան գերեաց եւ բազում ոճիրս գործեաց, զոր ոչ կարենք ընդ գրով արկանել...»¹³:

Այս պայմաններուն տակ, հասկնալի է, թէ ինչո՞ւ Կիլիկիոյ կաթողիկոսներ մերթընդմերթ հարկադրուած էին իբրեւ ատելի ապահով վայր՝ իրենց նստավայրը փոխադրել Հալէպ:

Մասնաւորաբար ԺԵ. դարավերջը եւ ԺԶ. դարասկիզբը՝ Սոյ Աթոռին ամէնէն խոռվայոյզ ու անապահով մէկ շրջանին, երբ Սիսը վտանգուած ու գրաւուած ճալալիներու ասպատակութիւններուն հետեւանքով, Կիլիկիոյ Կաթողիկոսութեան համար կարեւոր յենակէտ կը դառնայ Հալէպը, որ հետզհետէ աճած ու բարգաւաճած էր իր՝ Ս. Քառասուն Մանուկ եւ Ս. Աստուածածին եկեղեցիներով, իր 'դարպաս թագաւորական'ով՝ հայոց առաջնորդարանով, եւ յարաբերաբար ապահով վայր կը նկատուէր Կիլիկիոյ սահմաններուն մօտ, ուր տեղի հայ խոճաներն ու վաճառականները՝ ազդեցիկ դիրքեր գրաւած էին, վայելելով համակրանքն ու պաշտպանութիւնը Հալէպի իսլամ իշխանութեան: Վերջինիս ազդեցութեան շրջանակին մէջ էին ամբողջ Եփրատի հովիտը եւ Լեռնային Կիլիկիոյ մեծ մասը:

Պատմական աղբիւրներն ու ժամանակի ձեռագրական յուշարձաններու բազմաթիւ յիշատակարաններ կը վկայեն ոչ միայն Սոյ Կաթողիկոսութեան նստավայրի Հալէպ հաստատումին, այլեւ լոյս կը սփռեն Կիլիկիոյ Աթոռի եւ անոր գահակալներու Հալէպի մէջ ծաւալած գործունէութեան, պատմական կարեւոր դէպքերու եւ իրադարձութիւններու վրայ, որով Հալէպը հայ կեանքէն ներս գրաւած իր բացառիկ դերով եւ դիրքով հանդէս կու գայ որպէս ժամանակի հայ ազգային եւ եկեղեցական կարեւոր կեդրոններէն մէկը:

Գրեթէ անհնար է ստոյգ թուականներ սահմանել Սսի կաթողիկոսներուն յաճախակի տեղափոխութիւններու եւ դեգերումներուն առնչութեամբ: Ե՛րբ եւ ի՛նչ պայմաններու տակ որոշումներ առնուած են Սիսի Աթոռը Հալէպ փոխադրելու՝ կրնանք միայն ենթադրութիւններ կատարել, հետեւելով պատմական սկզբնաղբիւրներու, ձեռագիր յիշատակարաններու հաղորդումներուն: Տուեալները միահամուռ կը հաստատեն, որ Սիսի Կաթողիկոսութեան կամ կաթողիկոսներուն Կիլիկիոյ սահմաններէն դուրս՝ Հալէպ անցուցած շրջանները համընթաց են՝ Կիլիկիոյ քաղաքական վերիվայրումներուն, «դառն եւ անհանգիստ» ժամանակներուն:

Այսպէս, Կիլիկիոյ մէջ ստեղծուած ընկերային, տնտեսական եւ քաղաքական պայմաններուն, իրարայաջորդ պատերազմներու եւ հարստահարութիւններու հետեւանքով Կիլիկիոյ կաթողիկոսներէն ոմանք իրենց գահակալութեան ամբողջ տեւողութեան, ոմանք՝ միառժամանակ, իրենց նստավայր ընտրած են Հալէպը: Մասնաւորապէս՝ Յովհաննէս Բ.

Թվկուրանցի (1489-1525), Յովհաննէս Գ. Քիլիսցի (1525-39), Ազարիա Ջուղայեցի (1584-1601), հակաթոռ Պետրոս Կարկառեցի (1601-08), Յովհաննէս Դ. Այնթապցի (1602-21), հակաթոռ Դաւիթ Կարկառեցի (1663-72), հակաթոռ Ազարիա Կարկառեցի (1677-81), նաեւ յաջորդող կաթողիկոսներ, իրենց գահակալութեան՝ Սիսէն աւելի Հալէպ նստած են, ուրկէ վարած են կաթողիկոսութեան գործերը, զբաղելով նաեւ Երուսաղէմի Պատրիարքարանի խնդիրներով:

Այս առումով յատուկ ուշադրութեան են արժանի Լեհացիի հետեւեալ տողերը՝ «*եւ կաթողիկոսարանն ունէր ներքնապտուն, միջնապտուն եւ վերնապտուն վիմաշէն: Եւ պայրիարզն սուրբ Երուսաղէմայ եւ կաթողիկոս Սաա էր Յովհաննէս կաթողիկոս, որ միշտ Հալէպ նստէր*»¹⁴: Լեհացի Հալէպի առաջնորդարանը «կաթողիկոսարան» կը կոչէ, անշուշտ նկատի ունենալով անոր կաթողիկոսանիստ հանգամանքը:

Հալէպի ազգային եւ եկեղեցական պատմութեան ամէնէն արդիւնաւոր ու փառաւոր շրջանն է այս, երբ Կաթողիկոսութեան ծանրութեան կեդրոնը Հալէպ փոխադրուած է: Հոգեւոր, կրթական-մշակութային գործիչներու աստղաբոյլ մը կը փայլի Հալէպի Ս. Քառասուն Մանուկ եւ Ս. Աստուածածին եկեղեցիներու հովանիին տակ՝ կաթողիկոս, արքեպիսկոպոսներու, եպիսկոպոսներու, բանիբուն վարդապետներու, քահանաներու բազմութիւն մը, իրական վանք մը, վարդապետարան մը ժամանակի հասկացողութեամբ՝ մշակոյթի, գիտութեան եւ ուսումներու կեդրոն մը՝ համօրէն:

Սոյլ հոգեւոր պետերու աջակցութեամբ եւ հովանաւորութեամբ անախադէպ փայլք կը ստանայ Հալէպի դպրատունը, որ լայն առումով իբրեւ գիտութեան եւ կրթութեան կեդրոն կը կազմակերպուի յատկապէս Սիսի Կաթողիկոսութեան Հալէպի մէջ հաստատուելէն ետք: Միջնադարեան հայ արուեստի ու մշակոյթի գրեթէ բոլոր ճիւղերը, գրչութեան, մանրանկարչութեան եւ գիտութեան համակարգերը զարգացման որոշակի աստիճանի կը հասնին Հալէպի մէջ:

Այս այն ժամանակաշրջանն է, երբ Կիլիկիոյ նշանաւոր վանքերուն մեծ մասը կա՛մ անշքացած եւ կա՛մ՝ իսպառ դադրած էր գոյութենէ: Բնականաբար, Հալէպի եւ հալէպահայոց տնտեսական բարգաւաճ վիճակն ու պայմանները կը հրապուրէին հայաշխարհի ամէն կողմերէ եւ առաջին հերթին Կիլիկեան Հայաստանի վանքերէ հասնող գրիչները: Հալէպի մէջ, անոնք լայն հնարաւորութիւն ունէին իրենց արհեստը դրսեւորելու: Հալէպի եկեղեցիները այս կերպով կ'ապահովէին այն կենսադաշտը, ուր իրենց գործունէութիւնը կը շարունակէին Ամիդի, Զէյթունի, Հռոմկլայի, Կարկառի եւ այլ հոշակաւոր վանքեր ու անապատներ ներկայացնող գրիչներն ու ձեռագիրեր ստեղծող վարպետները: Հալէպը կերպով մը կը հանդիսանայ կիլիկեան մշակոյթի եւ գրչութեան ամանդոյթներու կրողն ու շարունակողը:

Գրչութեան այս կեդրոնն ու հոն միառժամանակ թռիչք առած ուսումնարանը վերելքի ծաղկուն շրջան կը բոլորէ յատկապէս Ազարիա Զուլայեցի, Յովհաննէս Այնթապցի եւ Պետրոս Կարկառեցի կաթողիկոսներուն ու անոնց հետ հոգեւոր մշակութային նշանաւոր գործիչներու Հալէպ հաստատումէն ի վեր եւ այս՝ բոլոր առումներով՝ գրչութեան, գիտական եւ ուսումնական ճիւղերուն մէջ: Իմաստասէր, փիլիսոփայ, աստուածաբան րաբունիներու, վարդապետ-ուսուցիչներու ներկայութիւնը դասատունէն ներս, կը հաստատէ թէ այստեղ գործի լծուած էին գիտական բարձր աստիճանի հասած հոգեւոր, կրթական գործիչներ: Ժամանակի ձեռագրական աղբիւրները կը յիշատակեն, որ Սոյ հոգեւոր պետերը ոչ միայն կ'առաջնորդէին, կը ղեկավարէին ուսումնական դասընթացքը, այլեւ ընդհանրապէս իրենք էին գրչութիւնն ու մատենական արուեստը ծաւալողներն ու զարգացնողները Հալէպի մէջ: Յատկանշական է կաթողիկոսներու, գիտնական վարդապետներու աշխուժ մասնակցութիւնը դասատան բոլոր աշխատանքներուն, ուր անոնք հանդէս կու գան իբրեւ գրիչ, կազմող կամ նորոգող, այլեւ պատուիրատու կամ ստացող:

ԺԶ.-ԺԷ. դարերու Հալէպի հայագաղութը հանդիսանալով հայ հոգեւոր-մշակութային եւ տնտեսական ներուժի կուտակման կեդրոն մը, կը վերածէր իբրեւ հոգեւոր եւ աշխարհիկ ուժերու մէկտեղում, հետեւաբար նաեւ առիթ եւ հնարաւորութիւն՝ արծարծելու համազգային խնդիրներ, ծաւալելու կրթական, մշակութային գործունէութիւն, յառաջ բերելով համընդհանուր շարժում մը: Այդ շարժման որպէս հիմնական մղիչ ուժ հանդէս կու գան գաղութին կեանքի այլազան բնագաւառներուն մէջ ազդեցիկ դերակատարութիւն ունեցող երկու հիմնական ուժեր՝ եկեղեցին եւ վաճառականութիւնը: Հալէպ, այսպիսով, կը դառնայ հայ գաղթաշխարհի ամենէն ծաղկուն եւ կարեւոր կեդրոններէն մէկը, զուգակշռելով նոյն ժամանակի հայկական գաղթօճախներ Ղրիմի, Լուվի, Պոլսոյ, Նոր Զուլայի կեդրոնները:

Պատմական բազում փաստեր կը վկայեն, որ Հալէպը կաթողիկոսական նստավայր դառնալով, յաճախ յայտնուած է համազգային կարեւոր խնդիրներու կիզակէտին, ինչպէս՝ Երուսաղէմի պարտուց վճարման համար Հալէպի մէջ կազմակերպուած համազգային հանգանակութեան, կամ Ազարիա կաթողիկոսի Հռոմի հետ մշակած յարաբերութիւններուն, դաւանաբանական տարակարծութիւններուն եւ առհասարակ, կաթողիկոսական աթոռի շուրջ ծայր առած ներքին անհամաձայնութիւններուն՝ հակաթոռ կաթողիկոսներու ձեռնադրութիւններ եւն.:

Այսպիսով, Հալէպի հայ իրականութեան մէջ միառժամանակ ասպարէզ եկած երկու կարեւոր ուժերու մէկտեղումով Հալէպի հայ գաղութը աւելի կազմակերպուած ու նպատակասլաց բնոյթ կը ստանայ, իսկ հասարակական-մշակութային կեանքը դուրս կու գայ համայնքային նեղ շրջագիծէն, ձեռք բերելով ազգային բովանդակութիւն ու նկարագիր:

ՅԱՏԿԱՆՇԱԿԱՆ ԴԷՊՔԵՐ, ԻՐԱԴԱՐՁՈՒԹԻՒՆՆԵՐ ՍԻՍԻ
ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ՀԱԼԷՊԵԱՆ ՇՐՋԱՆԷՆ

Հալեպի գրչութեան առնչուող մէկէ անլի ձեռագիրերու մէջ պահպանուած յիշատակարաններէն պարզ կը դառնայ, որ Յովհաննէս Բ. Թլկուրանցի կաթողիկոսի (1489-1525)¹⁵ օրով՝ Սիս ոչ միայն անապահով էր, այլեւ ինչպէս դէպքերու ժամանակակից եւ ականատես Դարիժեցի կը գրէ՝ ամէնուր անիշխանութիւն, անօրէնութիւն ու աներաժութիւն կը տիրէր. «...երկիրն անտէր եւ ամայի էր յաշխարհակալ բռնաւորաց»¹⁶: Հետեւաբար Թլկուրանցի իր գահակալութեան տարիները Սիսէն անլի Հալեպ կ'անցընէ, ուրկէ կը վարէ Երուսաղէմի գործերը, ստէպ այցելելով նաեւ Ս. Քաղաք: Հալեպի Ս. Քառասուն Մանուկ Եկեղեցիի թիւ 71 «Գանձարան»ը, գրուած 1479ին՝ «ի դառն եւ անբարի ժամանակի», «ի հայրապետութեան Հայոց Յովհաննէս Թուլկուրանցի կաթողիկոսի», կը պարունակէ 1500ին գրուած յիշատակարան մը, որ ուշագրաւ մանրամասնութիւններ կը յայտնէ Թուլկուրանցիի օրօք, հաւանաբար նաեւ իր հրամանով Ռէիս Իսայի կառուցած ու շէնցուցած Ս. Քառասուն Մանուկ Եկեղեցիին, ինչպէս նաեւ 'դարպաս թագաւորական'ի եւ ուխտաւորներու յատուկ խուցերու մասին: Ահա անանուն գրչի թողած չափածոյ գողտրիկ յիշատակարանին այդ հատուածը.

*Մովսէս վարդապետն եւ ես ծառայն,
Եկայք յաշխարհս արեւմտեան:
Ձի տենչացաք սբ. Յարութեան.
Եկեալ հասաք տունըս Շամեան,
Հալապ քաղաք ի շահաստան:
Հանդիպեցաք ուրախութեան,
Եւ ցնծացաք հոգով լըման,
Ձի նոր շինեալ էր սբ. խորան,
Յանուն սրբոց Խ (քառասուն) Մանկան՝¹⁷:*

Եկեղեցիի շինութեան մասին վիմագիր արձանագրութիւն մը կը պահուի թանգարանի վերածուած Ս. Աստուածածին Եկեղեցիին մէջ. «Յանուն աստուծոյ ի թվին ՋԽ (1491) ի պարոնութեան Իւզումուռին եւ ի յառաջնորդութեան տէր Յովհաննէս կաթողիկոսին՝ եւ Ըռէիս յիսէս, շինել տվի զեկեղեցիս յանուն Սբ. Քառասնիցն յիշատակ...»¹⁸:

1272ին Կեռան թագուիիի պատուէրով Սոյ մէջ գրուած ու պատկերագրողուած մագաղաթէ բարձրարժէք Աւետարանը (Երուսաղէմ, ձեռ. թիւ 2563) 1523 թուականին գնած է Յովհաննէս Թլկուրանցի կաթողիկոսը եւ նուիրած Ս. Յակոբայ Վանքին, իր ձեռքով յիշատակագրութիւն մը թողլով ձեռագրին մէջ. «Չվերջին ստացաւ սուրբ ոսկիպատ անտարանիս զՏէր Յովհաննէս կաթողիկոս Թուլկուրընցին աղաչեմ յիշել ի սուրբ յաղապս ձեր. որ ստացաւ զսա ի յիշատակ անջինջ

որ կենայ ի սուրբ Յակոբս... Արդ գնեցի զսուրբ Աւետարանս ի թվին Հայոց ՋՀԲ (1523), եւ եղի յիշատակ ինձ ի Սուրբ Յակոբս...»¹⁹:

Այս յիշատակարանէն, ինչպէս նաեւ աղբիւրներու մէջ տեղ գտած անուղղակի տուեալներէ կրնանք հետեւցնել, որ Թլկուրանցի իր կաթողիկոսութեան վերջին տարիները Հալէպ անցուցած է, ուրկէ եւ Երուսաղէմ մեկնած է իր հետ տանելով Ս. Յակոբին յիշատակ տրուելիք աստարանը:

Թլկուրանցի կաթողիկոս կը յիշուի նաեւ իբրեւ պատուիրատու եւ ստացող շարք մը ձեռագիրերու, ինչպէս՝ 1597ին օրինակուած «Մեկնութիւն Սահմանացն Դաթի» (Երուսաղէմ, Ձեռ. թիւ 1088), 1618ին Հալէպ գրչագրուած «Մատենագրութիւնք Ներսէս Լամբրոնացոյ» (Մեսրոպ Մաշտոցի անուան Մատենադարան, Ձեռ. թիւ 10509):

Հալէպի եւ Երուսաղէմի վերաբերող ձեռագիրերու յիշատակարաններ, ինչպէս նաեւ կարգ մը աղբիւրներու մէջ տեղ գտած վաւերագրեր²⁰, արժէքաւոր տեղեկութիւններ կը հաղորդեն Թլկուրանցի կաթողիկոսին Ս. Յակոբայ Վանքը պարտատէրերէ եւ վաշխառուներէ ազատելու, վանքին ինչքերը՝ կահկարասին ու սրբազան անօթները իրենց տեղը վերադարձնելու մասին: Այս տուեալները յաւելեալ լոյս կը սփռեն «անիշխանութիւններու եւ բազմիշխանութիւններու» արհաւիրքին տակ Թլկուրանցիի կաթողիկոսական գործունէութեան կարգ մը դրուագներուն վրայ:

Ժամանակագրական կարգով յաջորդը՝ Յովհաննէս Գ. Քիլիսցի կաթողիկոս, կը յիշուի քանի մը յիշատակարաններու մէջ, ըստ որոնց, ան նոյնպէս ժամանակ մը Հալէպ կը նստէր: Անոր կաթողիկոսութեան առաջին տարիները կը զուգահիսպին սուլթան Սուլէյմանի ձեռնարկած պատերազմական արշաւանքներուն (1526, 1527), որոնց հետեւանքով Կիլիկիոյ գլխաւոր քաղաքները - ներառեալ Սիսը - մեծ վնասներ կը կրեն:

Իրմէ ունինք ինքնագիր յիշատակարան մը գրուած Հալէպի հաւաքածոյի թիւ 4 ձեռագիր Աւետարանին մէջ, ըստ որուն՝ ան 1526ին, այսինքն՝ իր կաթողիկոսութեան երկրորդ տարին, Հալէպի մէջ իր քսակէն 15 ֆլորին վճարելով գրաւէ ազատած է 1511ին Սեբաստիա գրուած Աւետարանն ու զայն նուիրած Հալէպի Ս. Աստուածածին եւ Ս. Քառասուն Մանուկ եկեղեցիներուն. «Ի թվկնիս Հայոց ՋՀԵ (1526) աստարանս գրաւական էր ժԵ (15) ֆլոյ վերայ: Ես Յովանէս կաթողիկոս րուի եւ ազաւրեցի՝ եւ եղի յիշատակ ինձ եւ ծնաւղաց իմոց հոգոյն, ի քաղաքն Հալապ ի դուռն սուրբ Աստուածածնին եւ սուրբ Քառասնիցն...»²¹:

Յովհաննէս կաթողիկոսի անուան կը հանդիպինք նաեւ Հալէպի Ս. Աստուածածին Եկեղեցոյ ներսը, մուտքի դռան վերեւ ազուցուած մարմարէ սալիկին վրայ, որով կը հաստատուի, թէ եկեղեցին նորոգուած է Յովհաննէս կաթողիկոսի օրօք՝ 1535ին. «Ի թվին հայոց ՋՁԴ (1535), ի կաթողիկոսութեան րէր Յովհաննիսին եւ յառաջնորդութեան Խաչապուր

եպիսկոպոսին, ի թագաւորութեան սուլթան Սուլէմանին վերստին նորոգեաց խաւճայ Մախսուրն զՍուրբ Աստուածածինս յիշատակ իւր եւ ծնաւդաց իւրոյ...»: Նոյնպէս, եկեղեցիի մուտքի արեւմտեան ճակատին ագուցուած մարմարէ սալիկին վրայ կը կարդանք. «Շինեցաւ երկու դուռս մերոց ի թագաւորութեան սուլթան Սուլէման եւ հայրապետութեան Հովհաննէս կաթողիկոսի, թվին ԶԶԴ (1535)»: Յովհաննէս Գ. կաթողիկոսը կը յիշատակուի նաեւ Ս. Աստուածածին եւ Ս. Քառասուն Մանուկ եկեղեցիներու նորոգութեան առթիւ, իրաքանչիւր եկեղեցիի մուտքին վերը զետեղուած արձանագրութեանց մէջ: Առաջինի պարագային կը կարդանք՝ «Ես եմ դուռն ընդ իս, եթէ ոք մտնիցէ, կեցցէ, մտցէ եւ ելցէ եւ ճարակ գտցէ: Նորոգեցաւ Սուրբ Աստուածածնայ եկեղեցին թին հայոց 984ին (1535) եւ ի թագաւորութեան սուլթան Սուլէմանին եւ ի հայրապետութեան տեսոն Յովհաննէս կաթողիկոսին, եա կրկին նորոգեցաւ թին 1849-ին, եւ...»: Իսկ երկրորդին պարագային՝ «Ի թին հայոց ԶԶԱ (1532) ի ժամանակի պարոնութեան Կիլիկիոյ եւ յառաջնորդութեան տեսոն Յովհաննու սրբազան կաթողիկոսին երկրորդ շինութեամբ նորոգեալ էր յարեւելից կողմանէ դուռն սոյն Խ (40) մանկանց եկեղեցոյ..., իսկ այժմ ի հարաւ կողմն փոխադրելով սոյն դուռն երրորդ անգամ շինեցաւ... թիւ հայոց 1318 (1869)»:

Ուշագրաւ յիշատակարան մը կը պարունակէ Հալէպի ձեռագրական հաւաքածոյի թիւ 154 «Յայսմաւորք»ը, ըստ որուն գրիչը ձեռագրի ընդօրինակութեան ձեռնարկած է 1536ին՝ Ձէյթունի բերդին մէջ, բայց աւարտին հասցուցած մղոններով հեռու Հալէպի մէջ. «...եւ եղեւ գրաւորութիւն գրոյս ի Զ եւ ԶԵ (1536) թուականին, ի լաւ եւ յընտրիւր արինակէ, որ ասի Ծերենց...: Ի գաւառս Արսոյ՝ ի բերդն Ձէթոն, բայց Ե (5) մղոնաւ հեռի գրեցաւ գիրք այս ի հայրապետութեան Տեառն Յովհաննէս կաթողիկոսին, եւ ի բռնակալութեան Տաճկաց խունդարին Սուլթան Սուլէմանին»²²:

Յիշատակարանին մէջ, գրիչը Յովհաննէս Գ. կաթողիկոսը յիշատակելէ բացի, գրչութեան վայրին մասին սեղմ հաղորդման մէջ անուղղակիօրէն կ'արձանագրէ ԺԶ. դարուն տեղի ունեցող պատմական եղելութիւնները, հայկական բնակավայրերու մէջ տնտեսական եւ քաղաքական անկայուն պայմաններու բերմամբ հայ բնակչութեան դէպի Հալէպ անընդհատ հոսքը, եւ արդէն հարուստ եւ բարգաւաճ Հալէպի միջավայրին մէջ գրիչներու ծաւալած կենսագործունէութիւնը: Ձեռագրի ստացողն է տանուտէր Վարդան՝ ի յիշատակ Հալէպի Ս. Աստուածածին եւ Ս. Քառասուն Մանուկ եկեղեցիներու:

Որոշ ընդմիջումէ մը ետք՝ Սիսի Կաթողիկոսութիւնը դարձեալ Հալէպ փոխադրուած կը գտնենք Ազարիա Ջուղայեցի կաթողիկոսին օրով: Անոր կաթողիկոսութեան տարիները Կիլիկիոյ քաղաքական ամենախտովայոյզ ու անապահով շրջանը կը թուին ըլլալ: Մէկ կողմէ՝ ճալալիներու աւերիչ

արշաւանքներուն, միա կողմէ՝ Կիլիկիոյ վրայ իշխող ձորապետերու հարստահարութիւններուն հետեւանքով ամայացած ու աներուած էին գիւղեր ու քաղաքներ, Սիսը՝ գրաւեալ ու աներակ, ուստի՝ Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը կրկին ապաստան կը գտնէ Հալէպ:

ԺՁ. դարավերջի Հալէպի հայ գաղութը ազգային-հասարակական, հոգեւոր-մշակութային բացառիկ շրջան կը բոլորէ Ազարիա Ջուլայեցի կաթողիկոսի ժամանակ. ան իր նախորդին՝ Եսաչատուր Բ.ի կողմէ յաջորդ նշանակուելով կաթողիկոսական գահ կը բարձրանայ 1584ին եւ 17 տարի (1591-92, մէկ տարի ընդմիջումով) կը վարէ Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը՝ աթոռանիստ ընելով Հալէպը²³: Ազարիա առանձնայատուկ տեղ կը գրաւէ ԺՁ. դարու հայ եկեղեցականներու շարքին, ոչ միայն իբրեւ բազմահմուտ հոգեւորական՝ «*քաջ ընթացապետ, տիեզերալոյս վարդապետ*», այլեւ իբրեւ ազգային, հասարակական գործիչ, իբրեւ նախածեռնող եւ քաղաքագէտ հոգեւոր պետ²⁴:

Իր աթոռակալութեան շրջանին երկու հակաթոռ կաթողիկոսներ կ'օժուին՝ Տիրատուր Եպիսկոպոս՝ 1586ին, եւ ոմն Յովհաննէս՝ 1588ին²⁵: Դարուն պատմիչը՝ Դարանաղցի մերթ հակասական տեղեկութիւններ կը հաղորդէ Ազարիա կաթողիկոսի մասին. «...որ յառաջ քան զկաթողիկոս լինիլն երկաթ ազանէր եւ յետոյ թոյլամորթացաւ, փոխեցաւ զգործքն եւ զգեստն, բայց ի քարոզութենէ եւ ի դասասացութեանց ի վարժելոյ զբազմութիւն աշակերտացն ոչ դադարեաց, որ եւ աշակերտք սորին հոչակաւորք եւ պերճականք եղեն...»²⁶: Դարանաղցի այս դիտարկումները հիմք կու տան մեզի հաստատելու, որ Ազարիա Հալէպի մէջ եւս չէ դադրած «ի քարոզութենէ» եւ մանաւանդ՝ «ի դասասացութեանց», որու վառ ապացոյցն է նաեւ Հալէպի մէջ ծաղկած դասատուն-գրչատունը՝ ուսումնապետ կաթողիկոսին օրօք²⁷: Ջուլայեցիի աշակերտն ու յաջորդը՝ Յովհաննէս Այնթապցի կաթողիկոս, իր ընդօրինակած ձեռագիրերէն մէկուն յիշատակարանին մէջ կը խնդրէ յիշել իր ուսուցիչը. «...*յիշեցէք ի մաքրափայլ յաղաթս ձեր զհոգեւոր հայրն մեր եւ զլուսավորն հոգւոց մերոյ՝ զվերադիպողն Հայոց զՏէր Տէր Ազարիան*» (Երուսաղէմ, Ձեռ. թիւ 516):

Այս շրջանի Սիսի Կաթողիկոսութեան պատմութեան քանի մը դրուագներ կը նշանաւորեն Ազարիայի կաթողիկոսութիւնը Հալէպի մէջ: Առաջինը՝ Երուսաղէմի Ս. Յակոբեանց Վանքի պարտքերու հատուցման համար կազմակերպուած հանգանակութիւնն է, որ դուրս գալով գաղութի սահմաններէն կը տարածուի հայկական գաւառներուն եւ կեդրոններուն մէջ:

Ջուլայեցիի կաթողիկոսութեան ատեն Ս. Յակոբ դարձեալ ճնշուած է ծանր հարկերու եւ պարտքերու տակ: Դարանաղցի, որ այդ ժամանակ Երուսաղէմ կը գտնուէր, կ'ըսէ թէ խաչ մը անգամ չէր մնացած Ս. Յակոբայ Վանքին մէջ: Դարանաղցի բաւական մանրամասն տեղեկութիւններ կը

հաղորդէ Երուսաղէմի Պատրիարքական Աթոռը պարտքերէ ազատելու համար Ազարիա Ջուղայեցիի ծաւալած գործունէութեան մասին. «*Եւ ինքն Ազարիան նստէր ի Հալապ եւ հովուէր զհոսր իւր, մանաւանդ հոգ փանէր Սուրբ Յերուսաղէմայ, որ ի ժամանակին յայնմիկ խիստ առաւել փազնապի էր եւ ի մեծ վրանգի կայր մեր վանքն հայոց Սուրբ Յակոբն՝ ի յառաջնորդութեանն Դաւիթ եպիսկոպոսին: Եւ այս Դաւիթս անհուն եւ անվճար պարտական էր արարեր զՍուրբ Յակոբն եւ զՍուրբ Յարութիւնն, զամենայն սրբութիւնքն՝ զոսկեղէն եւ զարծաթեղէն, զխաչ եւ զոսկեպրուսի անփարանքն եւ զշուրջառքն գրաւ էին եղեալ մօտ յարապ փաճկացն: Յորժամ մեք այլ կացաք Դաւթի ժամանակն, մէկ խաչ չկայր եւ ոչինչ սրբութիւն կամ սպասք զարդուց, մերկացուցեր էր զամենայն»²⁸:*

Ջուղայեցի՝ Ս. Յակոբը փրկելու համար, ժամանակի նշանաւոր հոգեւորականները կը հրաւիրէ ժողովի, ուր կ'որոշուի ազգային հանգանակութիւն մը կազմակերպել հայաշատ կեդրոններուն մէջ: Հանգանակութիւնը կը կատարուի չորս ուղղութիւններով. 1՝ Ազարիա իր աշակերտներուն հետ կը ստանձնէ՝ «*զՍեբաստիոյ սանճաքն եւ ...զԵղուկիա, զԳաղապիա, զՀալէպ եւ զամենայն փունն Կիլիկեցոց»*²⁹ (այլ աղբիւրներու համաձայն Ազարիա մինչեւ Բաղէշ հասած է), 2՝ «*զԱմիթ եւ զամենայն Միջագետս»*՝ Սրապիոն Ուռհայեցի մեծ վարդապետ, 3՝ Կարին եւ շրջակայքը՝ Պետրոս Կարկառեցի, իսկ 4՝ Կ. Պոլիսը՝ Գրիգոր Կեսարացի:

Ազարիա 1600ին կը հասնի Բաղէշ «*Արդ գրեցաւ սա ի դառն եւ ի չար ժամանակիս. Ջոր անօրէնքն յամէն դիմաց նեղեն գորհստոնեայս ի հարկապահանջութիւն, որ ի բազում... պարտս անկեալ էր ի վերայ Երուսաղէմայ, եւ Երուսաղէմ կայր ի գերութիւն նոցա: Ջոր փետեալ եւ լուեալ սուրբ վարդապետն Ազարիայ, որ էր յայնմ ժամանակի հայրապետ Սըսայ եւ փղցկայր ի սրտի իւրում, եւ ոչ գիտէր թէ զինչ արասցէ: Եւ ի փրկութենէ Հոգւոյն Սրբոյ էարկ ըզմտաւ ելանել յերկիրն Հայոց առնուլ ողորմութիւն ըստ Պողոսի. փանել եւ ազատել զԵրուսաղէմ ի յայլ ազգաց: Եւ եկեալ եհաս քարոզութեամբ ի քաղաքս Բաղէշ...»³⁰: Նոյն թուականին կը դառնայ Ամիդ, եւ Նոյեմբեր 4ին՝ կը հասնի Հալէպ³¹: Հանգանակութիւնը կը շարունակուի երեք տարի. «*...վասն Սուրբ Երուսաղէմայ պարտուցն Գ. (3) ամ հեռացեալ յաթոռն ընդ արեւելս...: Զկնի Գ. (3) ամաց եղև գալուստ նորա ի Հալապ»*³²: Ապա Երուսաղէմ կ'երթան եւ պարտատէրերուն վճարելով՝ «*զոմանս աղաչելով եւ զոմանս փեղաց փաշայովն երկեցուցեալ»*, գրաւէ կ'ազատեն ու վանքին կը վերադարձնեն սպասներն ու զարդերը:*

Ուրիշ եղելութիւն մը եւս կ'առնչուի Սոյ Կաթողիկոսութեան հալէպեան ժամանակաշրջանին եւ մասնաւորապէս Ազարիա կաթողիկոսի անձին՝ Հռոմի հետ համարձակ յարաբերութիւններուն: Աղբիւրներու համաձայն, 10 Ապրիլ 1585ին Ազարիա կաթողիկոս Հալէպի մէջ կը գրէ եւ կը կնքէ

պապին ուղղուած նամակ մը՝ «...հաւատաց սահմանադրութեանց քաղկեդոնական...», ուր պատմութենէն օրինակներ բերելով, իր պատրաստակամութիւնը կը յայտնէ ընդունելու դաւանաբանական տարբերութիւնները, հետեւաբար նաեւ կաթոլիկ դաւանանքը:

Նոր Տոմարի հեղինակ Գրիգոր ԺԳ. քահանայապետը (1572-83) լրջօրէն ձեռք առած էր Արեւելքի եկեղեցիները Հռոմին միացնելու ծրագիրը, պատուիրակներ դրկած Սիս եւ Հալէպ՝ տեղւոյն վրայ հարցը ուսումնասիրելու եւ յարաբերութեան մէջ մտնելու Հայ եկեղեցւոյ հոգետր պետերուն հետ: Ինչպէս կը պարզուի Հռոմ ուղարկուած նամակներէն, Ազարիա հնարաւոր զիջումներ ըրած է Վատիկանին՝ անկէ քաղաքական եւ նիւթական օժանդակութիւն ստանալու յոյսով: Նամակը գրուած է Հալէպի մէջ, ուր ամենայն հաւանականութեամբ հրաւիրուած է ժողով՝ պապին պատասխան նամակը գրելու համար: Կարգ մը աղբիւրներու համաձայն, նամակը կնքած եւ հաստատած են հոգետր եւ աշխարհիկ դասի ինը ներկայացուցիչներ: Ուրիշներ՝ որպէս Ազարիայի խօսքերը հաստատողներ, կը յիշատակեն չորս եպիսկոպոսներ միայն: Մինչ դէպքերու ժամանակակից Դարանաղցի կը գրէ, որ Հալէպի առաջնորդ Ղազար եպիսկոպոսն էր, որ Ազարիայէն գաղտնի, անոր անունով կը գրէ այդ նամակը եւ կնիքը գողնալով կը կնքէ զայն: Ղազար եպիսկոպոս իր ստորագրութիւնն ու կնիքը կը դնէ նամակի վերջաւորութեան, որով կը հաստատուի անոր իսկութիւնը. «Ես Ղազար եպիսկոպոս Հալապ քաղաքի առնեմ վկայութիւն որպէս տէր ազարիա կաթողիկոսն մեր յառաջն քան զգալն ի Հալապայ յեպին ժամանակս վասն Սիս գնալուն, ընդունեցաւ եւ յայտնեաց զասացեալ դաւանութիւն լուծմամբ եւ հապիր կայք ի յայս յայտնութիւն բազում քահանայիք եւ այլ եպիսկոպոսիք, եւ նմանապէս մեք ...վկայութիւն առնեմք, որ ձեռագիրն եւ կնիքն եւ ձեռագիրն ըստոյզ ձեռամբ կաթողիկոսին է, ի վկայութիւն այսմ գրեցի...»³³:

Դժուար է այս հարցին առնչութեամբ եզրահանգումներ կատարել: Կը կարծենք՝ մութ եւ անյայտ էջ մը կը պակսի Ազարիա կաթողիկոսին Հռոմի հետ բանակցային գործընթացէն, որ առայժմ առեղծուած կը մնայ: Աւելի կը հակինք Դարանաղցիի տուեալներուն, քանզի Ազարիայի պէս բազմահմուտ եւ խորաթափանց հոգետրական մը կարելի չէ, որ նման ճամփաներով առաջնորդէր իր եկեղեցին, մանաւանդ, որ գոյութիւն ունեցող վաւերագրերը բաւարար չեն հաստատելու, թէ ուղղակի Հայ եկեղեցին Հռոմին միացնելու կամ դաւանափոխութեան խնդիր մը կայ: Բարկէն եպիսկոպոս (ապա աթոռակից կաթողիկոս) այս խնդրին շուրջ իր վերլուծութիւններն ու դիտարկումները կատարելով, հետեւեալը կ'ըսէ. «անգամ մըն ալ ուշադրութիւն կը հրաւիրենք Լէոնարդոյի (պապական նւիրակ) տեղեկագրին վրայ. վասնզի այս բանգէտ նւիրակը շարք լաւ թափանցեր է հայ ժողովուրդին քաղաքական ահռելի վիճակին եւ Հայոց հոգեբանութեան՝ մաքր ուղղակի դնելով վերքին կամ պէտքին վրայ եւ

երկու խօսքով բանաձեւած է՝ այս ժողովուրդը կաթոլիկ կ'ըլլայ, եթէ Հոռոմ կրնայ ազատել զինքն հարստահարութիւններէն կամ Ազարիայի բառով՝ 'տնանկութենէն'»³⁴:

Ազարիա կաթողիկոս կը վախճանի 1601ին եւ կը թաղուի Հալէպի Ս. Քառասուն Մանուկ Եկեղեցիին մէջ: Ըստ Չամչեանի՝ «Այլ մինչեւ էր սփռեալ ելուզակաց ի Հայաստան, մին ի նցէ, որոյ անուն էր Սաթըրճի Լէվէնտ՝ յաւարի էառ զՍիս քաղաք Կիւլիկոյ, եւ կողոպտեաց զկաթողիկոսարանն ընդ որ տիրեալ յոյժ Ազարիայ Զուղայեցոյ կաթողիկոսին. Սոյ անկաւ ի հիւանդութիւն եւ մեռաւ յամի. 1601. ՌԾ ի յունիսի. 2»³⁵: Յովհաննէս Այնթապցի սապէս կը նկարագրէ անոր մահը. «Այդ միջոցին սաստիկ մահտարածամ մը կար. յանկարծ հիւանդացաւ Ազարիա, հինգ օր պառկեցաւ եւ աւանդեց իր հոգին: Խաւար պատեց Հայոց տունը, որովհետեւ զրկուեցանք այսպիսի պայծառ արեւ մը»³⁶:

Ազարիա կաթողիկոսի աճիւնն ամփոփող մարմարէ տապանաքարը (գետնեղում Ս. Քառասուն Մանուկ Եկեղեցիի հին մատուան խորանին վարը՝ աստիճաններու միջեւ), ունի հետեւեալ արձանագրութիւնը. «Յոր վասն անչափ սիրոյ քոյին բանդ ի կուսէն առէր մարմին աղաչանօք Աստուածածնին, թող ըզյանցանս տէր Ազարիայ կաթողիկոսին, որ եւ հանգեաւ ի մեծ թվին ՌԾ (1601) աւելորդին, յորժամ գայցես աշխարհ կրկին, յարոյ՛ ըզսա փառոք քոյին, զիս զմեղօք որդի սորին, զտէր իմ պահեա շնորհիւ քոյին, ամէն»:

Ազարիայի կը յաջորդէ իր ընտրելագոյն աշակերտներէն Յովհաննէս Այնթապցի: Երբ «...կաթողիկոսն Սոյ (Ազարիա Զուղայեցի) անկաւ ի հիւանդութիւն եւ մեռաւ յամի. 1601 ՌԾ. ի յունիսի 2: Էր սորա աշակերտ Յովհաննէս վարդապետ Անթապիցի», որ կաթողիկոսութենէն առաջ արդէն տարբեր առիթներով կը փայլի Հալէպի մէջ իբրեւ գործակից Ազարիայի³⁷: Յովհաննէս Դ. Այնթապցի կրթութիւնը ստացած է նախ Սիս, ապա Հալէպ, աշակերտելով Ազարիա Զուղայեցիին:

Այնթապցի մէկն է այն կաթողիկոսներէն, որ բազում յիշատակագրութիւններ ձգած է: Ասոնք արժէքաւոր տեղեկութիւններ կը պարունակեն իր կատարած գործերուն եւ ժամանակի անցքերուն մասին: Յայտնի է, որ ինչպէս նախորդներուն, Յովհաննէս Այնթապցիի օրօք եւս, Սոյ Կաթողիկոսարանն իր մայրավանքով ենթակայ էր ճորապետերու եւ բռնատրներու յարձակումներուն, ուստի Այնթապցի նոյնպէս ստիպուած կ'ըլլայ ժամանակ մը Հալէպ նստիլ: Անոր անուան յիշատակութեան կը հանդիպինք Հալէպի շարք մը գրչագիրերու մէջ՝ իբրեւ գրիչ, պատուիրատու եւ ստացող, այլեւ կազմող ու նորոգող: Որպէս այդպիսին, ան կը հանդիսանայ Հալէպի դասատան առաջնորդող դէմքերէն: «Երաժիշտ եւ բարձրաբարբառ քարոզ տիեզերաց», «քաջ եւ անյաղթ փիլիսոփայ» տիտղոսները տրուած են իրեն: Հասցուցած է աշա-

կերտներու աստղաբոյլ մը՝ Խաչատուր Զէյթունցի, Պետրոս Կարկառեցի, Ներսէս Սեբաստացի (ապա կաթողիկոս Կիլիկիոյ), Մեսրոպ Պուղտանցի:

1586ին, Յովհաննէս տակաւին արեղայ, իր ուսուցիչ Ագարիա Զուղայեցիի խնդրանքով կ'ընդօրինակէ Գրիգոր Նարեկացիի «Մեկնութիւն Երգոց Երգոյն»ը եւ կը խնդրէ՝ անմեղադիր ըլլալ «ի սխալանաց եւ ի պակասութեան» գրին՝ «զի թէ շեշտը եւ թէ կէտը եւ թէ կիտը, եւ ստորակիտը, եւ այլ որ ինչ արուեստը կայ ի սմա դու իմաստուն եւ ճարտար մտաւք քննայ, զի ես խիստ տառապանօք գրեցի. զի ոչ թանաք ունէի եւ ոչ շիքրոն. ի վերայ ծնկիս եւ ի վերայ բարցին նաւորեցի. Այնոր համար արհեստին փոյթ չեղայ»³⁸:

1601ին Հալէպի մէջ կը ստանայ եւ կը նորոգէ «Ըսայի եւ Թուղթք Պաւղոսի» 1356 թուագիր ձեռագիրը (Վիեննա, Ձեռ. թիւ 113), ուր ձգած է չափածոյ յիշատակարան մը.

*«Ընդ առաջին եւ ընդ զմիջին,
Ստացողաց այս սուրբ տառի,
Եւ ինձ վերջի ստացողի,
Եւ նորոգողի այս սուրբ կտակի,
Ինձ Յովհաննու բանասիրի...»*³⁹:

1597ին կը նորոգէ Ս. Յակոբայ մատենադարանը պահուող Աստուածաշունչ մատեան մը եւ իր ոճով յիշատակարան մը կը գրէ. «Ընդ առաջի աշխատարարացն շարադրողացն եւ շարագրողացն Աստուածաշունչ Սբ. Կտակիս. զիս նուաստը եւ զտառապետը ոգիս զՅովհաննէս վարդապետս Յանթըրպցի, զնորոգողը եւ ըստ ժամանակեայ վայելո՞ծ ըստոգեբուի աստուածային...» (Երուսաղէմ, Ձեռ. թիւ 2309)⁴⁰:

Այս շրջանի յիշարժան դէպքերէն է Հալէպի մէջ Պետրոս Կարկառեցիի կաթողիկոսացումը: Ան իբրեւ Կիլիկիոյ կաթողիկոս եօթը տարի Հալէպ կը նստի (1601-08), կաթողիկոս ընտրուելով Հալէպի հայոց կողմէ⁴¹, մինչ Յովհաննէս Այնթապցի Սիս կը նստէր⁴²: Դարանաղցի այս դէպքերուն մասին հետեւեալը կը գրէ. «Եւ հալապցիք հակառակ Յովհաննէսին հարկ եղին ի վերայ Պեպրոսին եւ ստիպէին զնա լինել կաթողիկոս յանուն Սուրբ Յերուսաղէմայ, զի դու աւագ մեծ վարդապետը ես ի մեջ ամենայն հայոց եւ բազում աշակերտելոց հայր եւ Հալապս մերձ Յերուսաղէմայ եւ ամենայն հայոց դուռն է: ...Եւ եղեն երկու բանակ եւ պատակրեցան ժողովորդն, ոմանք ի Պեպրոսն դարձան՝ Հալապայ եղած հայքն, եւ այլ ամենայն աշխարհն կիլիկեցոց ի Յովհաննէս դարձան ձեռագրովք եւ հնազանդ եղեն նմա ասելով թէ՛ մեք մեր հայրենի աթոռ զՍիս գիտեմք եւ ոչ Հալապ»⁴³:

Կը տեսնենք, թէ Հալէպի հայ գաղութը իր իւրայատուկ ու կարեւոր դիրքով իրապարակ կը դառնայ նաեւ կաթողիկոսական աթոռի շուրջ վէճերու եւ պառակտումներու: Աթոռին կը նստին միաժամանակ երկու

կաթողիկոսներ, երկուութեան եւ պայքարի դուռ բանալով Սոյ ենթակա թեմերուն միջեւ⁴⁴:

«Եւ պարտ էր Պետրոսին լռել եւ ոչ լռեաց, այլ երկու ամ մեծ գժտութիւն եւ խռովութիւն եղեւ ի միջին նոցա, եւ յետ երկու ամացն հագիւ կարացին հաշտութիւն առնել երեսօք եւ ոչ սրտիք»⁴⁵:

Այնուհետեւ, համաձայնութիւն մը գոյացած է խնդրի լուծման համար, ըստ որուն՝ երկու կաթողիկոսները պէտք է շարունակէին իրենց գահակալութիւնը՝ մինչեւ երկուքէն մէկուն վախճանիլը, որմէ ետք վախճանողին տեղ յաջորդ պիտի չընտրուէր. «...պայման եղեալ այսպիսի. զի իւրաքանչիւր վարեսցէ զիւր առանձին վիճակ մինչեւ ի մահ. եւ ի մեռանիլ միոյն՝ միւսն լիցի ինքնիշխան կաթողիկոս. եւ այնպէս կացին անխռով ամս...»⁴⁶:

Հակառակ այս ամէնի՝ Հալէպի մէջ կաթողիկոսական աթոռի հաստատումը բարիք մը կ'ըլլայ ոչ միայն համայնքի, այլեւ լայն առումով նաեւ ողջ հայութեան համար: Պետրոս Կարկառեցի՝ «մեծ եւ աւագ վարդապետն», իր ժամանակի ամէնէն զարգացած եւ առաջաւոր մտաւորական եկեղեցականներէն մէկը՝ նոր փայլք ու շունչ կը հաղորդէ հալէպահայ զաղութին, յատկապէս գիտական, ուսումական, մշակութային ծիրին մէջ: Կարկառեցիի կենսագիր հեղինակներու աշխատութիւններէն կը տեղեկանանք, որ ան մօտ 40 տարի նախ որպէս աշակերտ, ապա առաջնորդ եւ ուսուցիչ անցուցած է Կիլիկիոյ Կաթողիկոսութեան սահմաններուն մէջ գտնուող՝ Կարկառի Ս. Տիմոթէոս Վանքին մէջ: Իր «հոգեւոր եղբօր»՝ Սրապիոն Ուռհայեցիի հետ աշակերտած է Մեծն Ղուկաս Կեղեցիին, որմէ ստացած է վարդապետական գաւազանը: Իրեն իբրեւ ուսուցիչ կը յիշուի նաեւ Ամիթի դպրոցի Յովհաննէս Շիրակ վարդապետը: Կարկառեցիի մասին դրուատիքի ջերմ խօսքերով կ'արտայայտուի Դարանաղցի. «Այս Պետրոսս կարի յոյժ առաքինի էր եւ կարի հմուտ գոյով Հին եւ Նոր Կրակարանաց, նրբից եւ արտաքնոց, եւ ժիր էր ի աշակերտաց վարժումն եւ ի դաս ասելն, եւ շար ժամանակ նստեալ կայր ի վանս Կարկառու, եւ ոչ ելանէր... թէ լինէր երբեմն յամթացիք բռնութեամբ տանէին ի քաղաքն դաս ասել ժամանակ մի եւ դարձեալ դառնայր ի վանս իւր: Եւ ել համբաւ նորա ընդ ամենայն Հայաստանեայս եւ փայլէր որպէս զարեգակն լուսաւորի ի մէջ աստեղեաց»⁴⁷:

Կարկառեցի հասցուցած է մեծ թիով աշակերտներ, որոնցմէ, կ'ըսուի թէ՛ «տրասից տուեալ է գաւազան»: Իր աշակերտներէն էին՝ Կարապետ Թիլաւանցի (Քոթ), Գրիգոր Գանձակեցի, Խաչատուր Կարկառեցի, Ղազար Տարանդացի, Թումա Կարկառեցի, Զաքարէ Վանեցի, Կիրակոս Տրապիզոնցի, Մաղաքիա Թոխաթեցի են.⁴⁸:

Բոլոր հիմքերն ունինք ենթադրելու, թէ Պետրոս Կարկառեցի Հալէպի մէջ կաթողիկոս օծուելէ յետոյ, Կարկառի դպրոցը հոն փոխադրած է, եւ

տեղւոյն դասատան մէջ շարունակած դասատուութիւնը մինչեւ իր կեանքին վերջը, որով Հալէպի դասատուն-գրչատունը նոր վերելք կ'ապրի «քաջ հոռետոր եւ րաբուն»՝ Պետրոս Կարկառեցիի առաջնորդութեամբ:

Պետրոս կաթողիկոս նաեւ բանաստեղծ է: Ձեռագիրերու մէջ պահպանուած են բանաստեղծական յօրինումներ՝ «Պետրոս կաթողիկոսէ ասացեալ»: Իրմէ ունինք նաեւ չափածոյ յիշատակարաններ: 1606ին գրած է Ողբ՝ «Վասն Աւերման Գիւղաքաղաքին Ճուղայոյ եւ Ամենայն Հայոց» (Երուսաղէմ, Ձեռ. թիւ 794): Ձեռագրական աղբիւրներու մէջ ան կը յիշուի իբրեւ պատուիրատու, նորոգող եւ կազմող:

Պետրոս կաթողիկոս վախճանած է 1608ին Հալէպ, թաղուած է Ս. Քառասուն Մանուկ Եկեղեցոյ հին մատռան ներսը, արեւմտեան որմին տակ, որուն վրայ կայ փորագիր ընդարձակ արձանագրութիւն. «...Սա ի հորէ ծընեալ լինի, Կարկառ անուն փոքր քաղաքի եւ սրբութեամբ ինքն սնանի, որպէս փարթակ յանապատի: Ի յափըն մեծ Եփրատ գետի ի վանքն Սբ. Տիմոթէի զամս Իս (40) այլ աւելի վարս ուղղէր ազգի ազգի...»:

Պետրոս կաթողիկոսի մահէն ետք, Սոյ իբրեւ միակ գահակալ կը մնայ Յովհաննէս Այնթապցի:

Յաջորդող դարերուն նոյնպէս Կիլիկիոյ կաթողիկոսներէն ոմանք պարբերաբար Հալէպ հանգրուանած են, որ սակայն այս ուսումնասիրութեան ծիրէն դուրս է:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

¹ Արաբական Աղբիւրները Հայաստանի եւ Հարեան Երկրների Մասին (Եակուպ ալ-Համատի, Աբու-Ֆիդա, Իբն Շադդադ), Հտր. 3, կազմ.՝ Հ. Նալբանտեան, Երեւան, Հայկ. ՍՍՌ ԳԱ, 1965, էջ 235:

² Մանր Ժամանակագրութիւններ. XIII-XVIII դդ., Հտր. 1, Նիւթեր Հայ Ժողովրդի Պատմութեան, Գիրք է., կազմ.՝ Վ. Յակոբեան, Երեւան, Հայկ. ՍՍՌ ԳԱ, 1956, էջ 82:

³ Արաբական Աղբիւրները, Հտր. 3, էջ 287:

⁴ Նոյն, էջ 250:

⁵ Հալէպի հայոց իբրեւ ինքնուրոյն համայնք կազմաւորման, ինչպէս նաեւ եկեղեցիներու սկզբնական շրջանի վերաբերեալ յստակ եւ ստոյգ տեղեկութիւններ կը պակսին մեզի: Յայտնի է միայն, որ 1329ին արդէն Հալէպի մէջ հայերը ունէին եկեղեցի՝ Ս. Աստուածածին անունով: Իսկ 1355ին գրուած ձեռագրի մը յիշատակարանը կը հաստատէ, թէ այդ թուականին արդէն Հալէպի մէջ կար կազմակերպուած համայնք՝ ռէիսի (տանուտէր) գլխաւորութեամբ:

⁶ Հալէպի հայ վաճառականներու ձեռքը կը գտնուէր Հալէպի փողերանոցը, մաքսատունն ու արտաքին առեւտուրը: Անոնց կը պատկանէր երոպական երկիրներու հետ առեւտուրի, յատկապէս մետաքսի վաճառքի մենաշնորհը՝ մետաքսի ճանապարհի ամբողջ երկայնքին՝ մինչեւ հեռաւոր Արեւելք, Հնդկաստան ու Չինաստան:

- ⁷ Միմէոն Դարի Լեհացոյ Ուղեգրութիւն, Տարեգրութիւն եւ Յիշատակարանք, Հրատ.՝ Լ. Ն. Ակինեան, Վիեննա, Մխիթարեան Տպարան, 1936, էջ 320:
- ⁸ Միմէոն Դարի, էջ 318:
- ⁹ ԺԵ. Դարի Հայերէն Ձեռագրերի Յիշատակարաններ, Հտր. Բ. (1451-1480 թթ.), կազմեց՝ Լ. Ս. Խաչիկեան, Երեւան, ՀՍՍՌ ԳԱ Հրատ., 1958, էջ 273:
- ¹⁰ Ժամանակագրութիւն Գրիգոր Վարդապետի Կամախեցոյ Կամ Դարանաղցոյ, հրատ.՝ Մեսրոպ վարդապետ Նշանեան, Երուսաղէմ, Ս. Յակոբ, 1915, էջ 13:
- ¹¹ Նոյն:
- ¹² Մայր Յուցակ Հայերէն Ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց Ի Վենետիկ, Հտր. Բ., յօրինեց՝ Հայր Բարսեղ Սարգիսեան, Վենետիկ-Ս. Ղազար, 1924, էջ 488:
- ¹³ Բաբկէն Ա. Աթոռակից Կաթողիկոս, Պատմութիւն Կաթողիկոսաց Կիլիկիոյ (1441էն Մինչեւ Մեր Օրերը), Անթիլիաս, ՏԿՎՄՏԿ, 1939, էջ 146:
- ¹⁴ Միմէոն Դարի, էջ 319:
- ¹⁵ Բանասիրութեան մէջ մինչեւ վերջերս ընդունուած էր կարծել, որ բանաստեղծ-տաղերգու Յովհաննէս Թլկուրանցի եւ կաթողիկոս Յովհաննէս Թլկուրանցի նոյն անձն է: Սակայն ներկայիս ապացուցուած է, որ բանաստեղծ Յովհաննէս Թլկուրանցի ապրած է ԺԴ. դարու երկրորդ եւ ԺԵ. դարու առաջին կէսին, հետեւաբար բացառուած է, որ միեւնոյն անձը ըլլայ:
- ¹⁶ Դարանաղցի, էջ 85:
- ¹⁷ Յուցակ Հայերէն Ձեռագրաց Հալէպի Ս. Քառասուն Մանկունք Եկեղեցոյ եւ Մասնատրաց, [Հտր. Ա.], կազմեց՝ Արտաւազդ Արք. Սիրմէեան, Երուսաղէմ, Ս. Յակոբեանց տպարան, 1935, էջ 151:
- ¹⁸ Իդէպ՝ 1500 թուագիր յիշատակարանի մը համաձայն Ռէիս (տանուտէր) Իսա Ա. Քառասուն Մանուկ Եկեղեցիին հետ մէկտեղ կառուցած է նաեւ նոյն բակին մէջ գտնուող մարոնիներու եւ յոյներու եկեղեցիները՝ «...Այլ եւ գիտրանն մարունեան, նոյնպէս զագգին ըզհոռոմեան...: Այլ եւ իւրցեր հանգրստարան, ի գալ հիրոցն աւարարական. ...Շինեաց դարպաս թագտրական, որ ժամարեղ էր ամառան. քահանայից տեղ էր հանգստեան, զի վայելեն խաղաղական» (Յուցակ Հայերէն Ձեռագրաց Հալէպի, էջ 151):
- ¹⁹ Հայերէն Ձեռագրերի Յիշատակարաններ, ԺԳ. Դար, կազմեց՝ Ա. Մաթեոսեան, Երեւան, Հայկ. ՍՍՀ ԳԱ Հրատ., 1984, էջ 415:
- ²⁰ Աստուածատուր Եպս. Տէր-Յովհաննէսեանց, Ժամանակագրական Պատմութիւն Երուսաղէմի, Հտր. Ա., Երուսաղէմ, Տպ. Սրբոց Յակոբեանց, 1890, էջ 251-4:
- ²¹ Յուցակ Հայերէն Ձեռագրաց Հալէպի, էջ 8
- ²² Նոյն, էջ 340:
- ²³ Գրիգոր Կամախեցի, էջ 320:
- ²⁴ Բաբգէն Եպիսկոպոս, «Ազարիա Զուղայեցի», Տաթեւ Կրօնական Տարեցոյց, Դ. Տարի, Հալէպ, Տպ. Արաքս, 1928, էջ 90:
- ²⁵ Հայր Միքայէլ Չամչեանց, Հայոց Պատմութիւն, Հտր. Գ., Վենետիկ, Ս. Ղազար, 1786, էջ 528:
- ²⁶ Դարանաղցի, էջ 319-320:
- ²⁷ Այս մասին տե՛ս՝ Վարդի Քէշիշեան, «Հալէպի Գրչութեան Կեդրոնը», Բանբեր Մատենադարանի, թիւ 19, 2012, էջ 191:

- ²⁸ *Դարանաղի*, 320
- ²⁹ Նոյն, էջ 321:
- ³⁰ Բաբկէն Ա. Աթոռակից, էջ 159-160. նաեւ՝ Երուսաղէմ, Ձեռ. թիւ 338, *Մայր Յուցակ Ձեռագրաց Սրբոց Յակոբեանց*, Հոր. Բ., կազմեց՝ Նորայր Եպս. Պողարեան, Երուսաղէմ, Տպ. Սրբոց Յակոբեանց, 1967, էջ 223:
- ³¹ Մետրոպ Մաշտոցի անուան Մատենադարան, Ձեռ. թիւ 1518, *Մայր Յուցակ Հայերէն Ձեռագրաց Մաշտոցի Անուան Մատենադարանի*, Հոր. Ե., կազմ.՝ Օ. Եգանեան, Երեւան, «Նայիրի» Հրատ., 2009, էջ 203:
- ³² *Յուցակ Հայերէն Ձեռագրաց Զմմառի Վանքի Մատենադարանին*, կազմեց՝ Մետրոպ Վրդ. Քէշիշեան, Վիեննա, Մխիթարեան տպարան, 1964, էջ 195:
- ³³ Աղեքսանդր Վրդ. Պալմեան, *Պատմութիւն Կաթողիկէ Վարդապետութեան Ի Հայս եւ Միութեան Նոցա Ընդ Հռոմէական Եկեղեցոյ Ի Փլորենտեան Սինհոդոսի*, Վիեննա, Մխիթարեան [Տպարան], 1878, էջ 307:
- ³⁴ Բաբկէն Ա. Աթոռակից, էջ 180:
- ³⁵ Չամչեան, էջ 536:
- ³⁶ Բաբկէն Ա. Աթոռակից, էջ 184:
- ³⁷ Ազարիա կաթողիկոսին Երուսաղէմի Ա. Յակոբեանց վանքը պարտքերէ ազատելու հանգանակութեան Պետրոս Կարկառեցի կարեւոր մասնակցութիւն կ'ունենայ:
- ³⁸ Երուսաղէմ, Ձեռ. թիւ 958, *Մայր Յուցակ Ձեռագրաց Սրբոց Յակոբեանց*, Հոր. Գ., կազմեց՝ Նորայր Եպս. Պողարեան, Երուսաղէմ, Տպ. Սրբոց Յակոբեանց, 1968, էջ 514:
- ³⁹ Յակոբոս Վ. Տաշեան, *Յուցակ Հայերէն Ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց Ի Վիեննա*, Հոր. Ա., Վիեննա, Մխիթարեան Տպ., 1895, էջ 394:
- ⁴⁰ *Մայր Յուցակ Ձեռագրաց Սրբոց Յակոբեանց*, Հոր. Գ., կազմեց՝ Նորայր Եպս. Պողարեան, Երուսաղէմ, Տպ. Սրբոց Յակոբեանց, 1968, էջ 513:
- ⁴¹ Ըստ աղբիւրներու Յովհաննէս Այնթապցի Հալէպէն Ատանա գացած է Ազարիայի մահէն 5 ամիս ետք եւ կաթողիկոս օծուած 20 Դեկտեմբեր 1601ին, ուստի կրնանք ենթադրել, որ Պետրոս Կարկառեցի կաթողիկոսական ձեռնադրութեան եւ օծման արժանացած է 1601 Նոյեմբերի վերջ-Դեկտեմբեր 20 ժամանակամիջոցին:
- ⁴² Պատմագիրներէն ոմանք Պետրոս Կարկառեցին հակաթոռ կաթողիկոս կը նկատեն, ոմանք ալ կ'ընդունին կաթողիկոս իր նախորդներուն շարքին: Այս մասին աւելի մանրամասն տե՛ս՝ Վեներա Մակարեան, «Կիլիկիոյ Ազարիա Կարկառեցու Հակաթոռութեան Թուականը (ԺԷ.-ԺԸ. դդ.) (Ըստ Հալէպի Շարիա Դատարանի Արաբերէն Արձանագրութեան)», *Հայկազեան Հայագիտական Հանդէս*, Հոր. ԼԷ., 2017, էջ 465-472:
- ⁴³ *Դարանաղի*, էջ 329-330:
- ⁴⁴ Հ. Միքայէլ Չամչեան հետեւեալը կը հաղորդէ կաթողիկոսական աթոռի շուրջ ծայր առած պայքարի վերաբերեալ. Յովհաննէս Այնթապցի եւ Պետրոս Կարկառեցի՝ որպէս երկու ընկերներ «...ի մեռանիլ սպա Ազարիա՝ գնացին երկոքին ի Բերիա. եւ կացին անդ ամիսս ինչ մինչ ի դեկտեմբեր: Մեկնեալ անտի Յովհաննէս վարդապետի Անթէփոյ՝ գնաց յԱրանա. եւ Պետրոս մնաց ի Բերիա. եւ զի դեռես չէր եղեալ կաթողիկոս ի Սիս՝ ժողովորդքն Բերիոյ

ստիպեցին զՊեպրոս վարդապետ, եւ ետուն ձեռնադրել զնա կաթողիկոս Սոյ առանց հաւանութեան Սեցցոց»: Այս լուրը առնելով, սեցիք՝ միաբանք եւ ժողովուրդ իբր յուժ կը խոռվուին, եւ Յովհաննէս վարդապետը Սիս բերելով կը ձեռնադրեն կաթողիկոս. «եւ եղեն յայնժամ կաթողիկոսունք Սոյ եւ երկու որոնց՝ մին նստէր ի Սիս, եւ միան ի Բերիս» (Չամչեան, էջ 536):

⁴⁵ Դարանաղի, էջ 329-331:

⁴⁶ Չամչեան, էջ 536:

⁴⁷ Դարանաղի, էջ 351-352:

⁴⁸ Դարանաղի, էջ 353, 357, 363-364:

Aleppo as the Seat of the Cilician Catholicosate (16th-17th Centuries)

(Summary)

Varty Keshishian

keshishian.varty@gmail.com

Armenians have been acquainted with Aleppo from the earliest times. Basically due to trade, and sometimes for military reasons, Armenians gradually became established in Aleppo, particularly as of the 13th century. After the fall of the Cilician Armenian Kingdom in 1375, large numbers of Armenians left Cilicia and took refuge in Aleppo. The Aleppine Armenian community grew and developed in the 15th-16th centuries, when Armenian tradesmen and *khodjas* acquired significance and held powerful positions in Aleppo in trades and administration. The convergence of Armenian *khodjas* coincided with the temporary relocation of the Sis Armenian Catholicosate to Aleppo in the 16th-17th centuries, at a time when the Great See and the whole area were under the menace and domination of Turkmen tribes. Particularly in the late 16th century the Sis Catholicosate was in danger due to the Djelali movement. Therefore, the Catholicosate was transferred to the premises of the Aleppo Karasnits Mangants and Surp Asdvadzadzin churches. Alongside the Catholicos other high-ranking clerics and cultural figures converged on Aleppo, which became a spiritual-cultural center for the Armenians.

During the 16th and 17th centuries the Aleppo Armenian community had its golden age, as all aspects of Armenian medieval culture developed and reached new heights. Aleppo, thus, became a natural preserve of medieval Armenian arts and safeguarded the continuity of its rich traditions

Indeed, when in the 15th-16th centuries all of Asia Minor and Cilicia had become an area of operation for the Djelali brigands, Aleppo turned out to be a safe haven for the Cilicia Catholicosate and the Armenians of the region.